ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան (կնքման վայրը) «05» օգոստոսի 2024թ.

«08» հունվարի 2018 թվականին կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման ԿՊ0044 պայմանագրի (այսուհետ՝ **Պայմանագիր**) կողմերը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ **Մատակարար**), ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ներքին գործերի նախարարությունը (այսուհետ՝ **Սպառող**), ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով «**Կողմեր**», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «**Կողմ**», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Պայմանագրի** 6-րդ հավելվածին կից ցանկում («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ բաժանորդներ ՀՀ ՆԳՆ սպորաբաժանումներ) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) ավելացնել ստորև նշված բաժանորդական քարտը.

h/h	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
1	62968005	0276319	ՀՀ ՆԳՆ ՌՀՄ 27	Երևանի ԷՄԴ «Շենգավիթ» տարածք

բ) հանել ստորև նշված բաժանորդական քարտը.

h/h	ID	Քարտի համարը	Բաժանորդի անվանումը	Մասնաճյուղի (էլ.ցանցի) անվանումը
1	19635050	3001588	ՀՀ ՆԳՆ ՓԾ ԿՈՏԱՅՔԻ ՀՐԴԵՀ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ	Գեղամա մ/ճ «Հրազդան» էլ.ցանց

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ մասով կիրառվում է 2024 թվականի հուլիսի 1-ից, Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:
2. Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր Կողմի համար:

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար	**Սպառող**
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	ՀՀ ներքին գործերի նախարարություն
Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արմենակյան 127	Գտնվելու վայրը՝ ք.Երևան Նալբանդյան 130
Լիազորված անձ՝	ՆԳՆ գլխավոր քարտուղար՝
Դ. Ղազինյան	Ա. Ֆիդանյան
Կ.Տ.	Կ.Տ.